

վերլուծության մեթոդաբանություն և զեկույց
երկու խոշորացված համայնքներում
ուսուցման/վերապատրաստման
կարիքների փորձնական գնահատումներից ստաց
ված հիմնական արդյունքների և
առաջադրությունների մասին

Տեղական ինքնակառավարման ծրագիր

Հարավային Կովկաս՝ Հայաստան

Գործարքի համար՝ 81208272

Ձևակերպման համար՝ 16.2174.7-009-00

(նախկին՝ 12.2144.9-017.00)

7 հուլիսի, 2017 թ.



PAi

Մույն զեկույցը կազմել են Ուլլե Փուրգան և Տիգրան Գրիգորյանը՝ երկուսն էլ որպես խորհրդատու ներգրավվելով «Փարլիք Ադմինիստրեյշըն Ինթերնեյշընըլ Լիմիթիդ» (Փի - Այ-Ի) ընկերության կողմից, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (Ջի-Այ-Ջեթ) հետ պայմանագրի շրջանակում: Արտահայտված տեսակետները ներգրավված փորձագետներինն են և պարտադիր չէ, որ արտացոլեն Փի-Այ-Ի ընկերության կամ Ջի-Այ-Ջեթ-ի կարծիքները:

Բովանդակություն

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԵՐԱՊԵՐՄԱՆ
 ԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 4

Ներածություն..... 4

Վերապատրաստման կարիքների գնահատման մոտեցումը 5

Վերապատրաստման կարիքների գնահատման կազմակերպումը
 ռազմավարական (համայնքային ծառայության) մակարդակով..... 7

Համայնքապետարանների մակարդակով վերապատրաստման
 կարիքների գնահատման գործընթացի կազմակերպումը և կառավարումը8

Համայնքապետարանի վերապատրաստման կարիքների գնահատման
 հաշվետվության կառուցվածքն ու բովանդակությունը 10

Վերապատրաստման կարիքների համապարփակ գնահատում 11

ՎԵՐԱՊԵՐՄԱՆ ԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ..... 11

Ընդհանուր տեղեկություններ 11

Վերապատրաստման կարիքների գնահատման կազմակերպումը
 պիլոտային երկու համայնքներում 11

Ընդհանուր տվյալների ամփոփում 12

Տեղեկություններ անցած
 վերապատրաստման արդյունքների վերաբերյալ..... 16

Արդյունավետ աշխատանքի համար հմտությունների և գիտելիքների
 ոլորտների կարևորության վերլուծություն՝ ըստ բոլոր հարցվածների
 պատասխանների..... 20

Բոլոր հարցվածների պատասխանների հիման վրա գիտելիքների և
 հմտությունների ներկա մակարդակի վերլուծությունը 29

Վերապատրաստման առաջնահերթ կարիքները. Հմտությունների և
 գիտելիքների կարևորության գնահատման և ներկա մակարդակի
 համեմատությունը 43

Որակական վերլուծություն՝ ըստ հարցազրույցներից ստացված
 տեղեկությունների 44

Հավելված 1. Ուղղորդող հարցեր նոր քաղաքականություն, իրավական
 ակտեր և ընթացակարգեր մշակող մարմինների հետ վերապատրաստման
 կարիքների շուրջ հարցազրույցների համար..... 48

Հավելված 2. Ինքնագնահատման հարցաշար 49

Հավելված 3. Վերահսկվող աշխատակազմի վերապատրաստման կարիքների գնահատման հարցաշար	50
Հավելված 4. Ղեկավարների հարցազրույցների համար ուղեցույց-հարցաշար	53
Հավելված 5. Ինքնագնահատման հարցաշար	- 0 -

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ Ծ ԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ Կ ԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ներածություն

Տարածքային կառավարման կարգազման նախարարությունը (այսուհետ՝ ՏԿԶՆ) նպատակադրել է բարելավել համայնքային ծառայության վերապատրաստման նման ազդեցական կարգազման գործընթացի արդյունավետությունը և արդյունավորությունը:

Այսուհետև յոթամսյա ընթացքում վերապատրաստման կարիքների համակարգված գնահատման ներդրումն է համայնքային ծառայության վերապատրաստման նման ազդեցական կարգազման միջոցառումների առաջնահերթությունների, բովանդակության թիրախային խմբերի աստիճանական համար:

Ընթացիկ մեթոդաբանության հիմնական նպատակն է օգնել համայնքային ծառայողների վերապատրաստման համար պատասխանատու պաշտոնատար անձանց համակարգված ձևով վերապատրաստման կարիքների վերահանման և վերապատրաստման պլաններին շնչավանդումներ և վերապատրաստման դասընթացներին ախազման համար վերապատրաստման կարիքների գնահատման արդյունքն օգտագործելու հարցում՝ ինչպես համայնքային ծառայության, այնպես էլ համայնքապետարանների մակարդակով կարողություններում վերահանված բացերը վերացնելու համար:

Մեթոդաբանության համաձայն՝ ակնկալվում է, որ վերապատրաստման կարիքների գնահատումը կիրականացնվի երկու՝ ռազմավարական (համայնքային ծառայության) և համայնքապետարանների մակարդակով:

Համապատասխանաբար, մեթոդաբանության բնութագրվում են երկու մակարդակներով վերապատրաստման կարգազման ռազմավարական կարիքների վերլուծության եղանակի վերաբերյալ առաջարկություններ: Համայնքներում իրականացվելիք ՎԿԳ գործընթացը նախագծված է այնպես, որ հնարավորինս քիչ բարդություններ ունենա: Այն նախատեսված է յուրաքանչյուր տարի իրականացվելու համար՝ հաջորդ տարվա վերապատրաստման առաջնահերթ ծրագրերը նպլանները սահմանելու նպատակով:

Մեթոդաբանությունն ուղեցույց է համայնքներում վերապատրաստման տարեկան կարիքների վերահանման գործընթացի համար: Այն սահմանում է այս գործընթացում համայնքային ծառայողների պարտականությունները, ինչպես նաև ներկայացնում է հստակ քայլեր՝ դրական ավարման համար: Մեթոդաբանությանը կցվում են բոլոր հարցաշարերի անհրաժեշտ ձևերը, որոնք պետք է լրացվեն համայնքային աշխատողներին նրանց վերադասների կողմից: Այնուամենայնիվ, որոշակի ժամանակամիջոցի ցիտո (4-5 տարի հետո կամ համայնքների ուսկություններին շնչական կալիփոփոխությունների ցիտո) խորհրդատուներն առաջարկում են իրականացնել վելի համապարփակ ՎԿԳ: Մեթոդաբանության և առաջարկություններն հարցաշար են ներկայացվում դրահամար:

Քանի որ վերապատրաստման կարիքների վերաբերյալ տվյալների վերլուծությունն ու եզրակացությունները հանգումը կարիքների վերահսկման գործընթացի հիմնական քայլն է, մեթոդաբանության մեթոդները կայացվում են վերլուծական աղյուսակների ձևանմուշներ: Ուստի, սույն մեթոդաբանությունը նախատեսված է վերապատրաստման կարիքների արդյունավետ գնահատում իրականացնելու հարցում համայնքային վերապատրաստման համակարգի շահագրգիռ կողմերին աջակցելու համար, որպեսզի վերապատրաստմանը և զարգացմանն ուղղված ներդրումները հասնեն ցանկալի արդյունքների:

Վերապատրաստման կարիքների գնահատման մոտեցումը

Վերապատրաստման արդյունավետությունը և ձեռքբերումները բարելավելու նպատակով վերապատրաստման, ուսումնառության նպատակները և բովանդակությունը պետք է համապատասխանեցվեն համայնքային ծառայողների, համայնքների և ամբողջությամբ վերցրած համայնքային ծառայության կատարողականին ներկայացվող պահանջներին: Ուստի առաջարկվող մոտեցման նպատակն է ՎԿԳ-ի իրականացումը համակարգված գործընթացի միջոցով, որին իրենց նպաստը կբերեն տարբեր մակարդակները և տեսանկյունները՝ առկա կարողությունների և կարողությունների բացերի վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար: Վերապատրաստման կարիքների գնահատումը նախատեսված է համայնքապետարանների հիմնական գործառնություններն իրականացնող համայնքային բոլոր աշխատակիցներին ներգրավելու համար:

Համայնքային վերապատրաստման տարբեր մակարդակների շահագրգիռ կողմերի միջև երկխոսությունը, ինչպես նաև վերնից ներքև և ներքևից վերև մոտեցումների համակցումը նախատեսված է տվյալների համապատասխանությունն ու որակը բարձրացնելու, ինչպես նաև վերապատրաստման հետագա գործընթացի արդյունավետությունն ու արդյունավորությունն ապահովելու համար:

Առաջարկվող մեթոդաբանության համաձայն՝ ՏԿԶԼ-ն կանոնակարգում, համակարգում, կազմակերպում և մշտադիտարկում է վերապատրաստման կարիքների գնահատման գործընթացը՝ համագործակցելով համայնքների հետ:

Վերապատրաստման կարիքների գնահատումն իրականացվում է երկու մակարդակով.

- ա. ռազմավարական (համայնքային ծառայություն) ազգային մակարդակ.
- բ. համայնքապետարանի մակարդակ:

Ռազմավարական (համայնքային ծառայության) ազգային մակարդակ

Տեղական ինքնակառավարման ոլորտի բարեփոխումները, նոր քաղաքականությունների, իրավական ակտերի և ընթացակարգերի ներդրումը հավանական է, որ ուղեկցվի համայնքային ծառայողների գործառնությունների և աշխատանքի հանձնարարությունների փոփոխություններով: Կարող են ստեղծվել նոր կառուցվածքներ և պաշտոններ և նոր ունակություններ, գործառնություններ և խնդիրներ ավելացվել համայնքապետարանների, դրանց կառուցվածքային ստորաբաժանումների և որոշակի պաշտոնների համար: Համապատասխանաբար, աշխատանքային ընթացակարգերը և պահանջվող հմտությունները/գիտելիքները կարող են փոխվել: Այդ դեպքերում անհրաժեշտ է ողջ երկրում համայնքային ծառայողներին վերապատրաստել, որպեսզի նրանք կարողանան նոր

պայմաններում արդյունավետորեն աշխատել: Ռազմավարական զարգացման ծրագրերը, ինչպես նաև քաղաքականությունները և օրենսդրության փոփոխությունները, որոնք ազդեցություն են ունենում համայնքային ծառայողների աշխատանքի վրա, մշակվում են Կառավարության մակարդակով տարբեր մարմինների կողմից: Ուստի, վերապատրաստման հարակից կարիքների վերհանումը պարտադիր պետք է իրականացվի նաև ամենաբարձր վարչական մակարդակով: Օրինակ՝ հանրային ֆինանսների կառավարման բարեփոխումները սովորաբար մշակվում են Ֆինանսների նախարարության կողմից: Հետևաբար, համայնքների ֆինանսական կառավարման ուղղությամբ սպասվող փոփոխությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման և այդ փոփոխությունների իրականացման համար պահանջվող հմտություններն ու գիտելիքները սահմանելու համար լավագույն մարմինը Ֆինանսների նախարարությունը կլինի:

Ուստի, ռազմավարական մակարդակով վերապատրաստման կարիքների կանոնավոր գնահատում պետք է իրականացվի ՏԿԶՆ-ի համապատասխան ստորաբաժանման կողմից՝ համայնքային ծառայության աշխատանքի վրա ազդող բարեփոխումների և օրենսդրության մշակման մեջ ներգրավված հիմնական մարմինների հետ համագործակցությամբ: ՏԿԶՆ պարտադիր պետք է խորհրդակցի համայնքային ծառայության վրա անդրադարձող քաղաքականության մշակման համար պատասխանատու հիմնական պետական մարմինների հետ, ինչպես նաև օգուվի հիմնական ռազմավարական փաստաթղթերից (ընդհանուր և ոլորտային ռազմավարություններ և քաղաքականություններ, ՀՀ Կառավարության ծրագիր և այլն) և սահմանի կենտրոնացված վերապատրաստման հիմնական ուղղությունները և թիրախային խմբերը: Վերապատրաստման վերհանված կարիքներն անհրաժեշտ է դասակարգել ըստ առաջնահերթության՝ ելնելով Կառավարության ռազմավարական և քաղաքականության նպատակներից: Ավելին, անհրաժեշտ է վերլուծել համայնքներից վերապատրաստման կարիքների գնահատման մասին ստացված տեղեկությունները: Երկու աղբյուրների տեղեկությունների վերլուծության արդյունքում անհրաժեշտ է ձևակերպել վերապատրաստման առաջնահերթությունները (օրինակ՝ ոլորտները, թեմաները և թիրախային խմբերը), որոնց անդրադարձ է կատարվելու կենտրոնացված վերապատրաստման միջոցով:

Համայնքապետարանների մակարդակ

Համայնքապետարանի մակարդակով վերապատրաստման կարիքների գնահատումը պետք է ապահովի, որ վեր հանվեն հմտությունների կամ գիտելիքների կատարելագործման կարիքները՝ համայնքապետարանների զարգացման նպատակների իրագործման համար: Համայնքային ծառայողների վերապատրաստումը նրանց պետք է ապահովի անհրաժեշտ գիտելիքներով ու հմտություններով՝ նախատեսվող բոլոր փոփոխություններին դիմակայելու համար: Վերապատրաստման կարիքները սահմանելիս՝ անհրաժեշտ է հաշվի առնել համայնքապետարանի աշխատանքային ծրագրերը, ինչպես նաև համայնքապետարաններում ներդրման համար նախատեսվող կազմակերպական փոփոխությունները (խոշորացումը և կառուցվածքային համապատասխան փոփոխությունները, նոր գործառույթները, աշխատանքային միջավայրի փոփոխությունները, նոր տեխնոլոգիաների ներդրումը և այլն):

Բացի այդ, համայնքապետարանի մակարդակով վերապատրաստման կարիքների վերհանումը պետք է կենտրոնանա նաև համայնքապետարանի և իր աշխատակազմի կատարողականի թերությունների (բացերի) վրա: Այսպես, վերապատրաստման կարիքների գնահատում կատարելու ժամանակ անհրաժեշտ է

սահմանել այն ոլորտները, որտեղ համայնքային ծառայողները ունեն հմտությունների և գիտելիքների պակաս՝ իրենց աշխատանքային ամենօրյա գործառնությունները և խնդիրներն իրականացնելու համար: Կատարողականի բացերի ու վերապատրաստման հարակից կարիքների վերհանման իդեալական տարբերակը աշխատանքի գնահատման գործընթացի ընթացքում դրա իրականացումն է: Քանի դեռ աշխատանքի գնահատումը լիարժեք չի գործում կամ չի ներառում այս տարրը, խորհրդատուներն առաջարկում են այն կառավարել հարցաշարի կիրառմամբ, որը կլրացվի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների կողմից՝ իրենց վերահսկողության ներքո աշխատողների հետ սերտ համագործակցությամբ: Անհրաժեշտության դեպքում՝ վերադասը կարող է վերահսկվող անձնակազմին խնդրել ինքնագնահատում կատարել (նույն հարցաշարի կիրառմամբ), ինչն էլ ավելի ուշ կքննարկվի և կօգտագործվի վերադասի կարծիքը ձևակերպելու համար: Կարիքների գնահատման արդյունքները պետք է հիմք ծառայեն համայնքային ծառայողների համար անհրաժեշտ վերապատրաստման բովանդակությունը սահմանելիս և համայնքապետարանի տարեկան ծրագիրը մշակելիս:

Վերապատրաստման կարիքների գնահատման կազմակերպումը ռազմավարական (համայնքային ծառայության) մակարդակով

Վերապատրաստման կարիքների գնահատման գործընթացում գլխավոր և համակարգող դեր ստանձնող հիմնական մարմինը ՏԿԶՆ է՝ որպես համայնքային ծառայության զարգացմամբ շահագրգիռ կենտրոնական մարմին:

Բացի այդ, ՏԿԶՆ նաև իրականացնում վերապատրաստման ռազմավարական կարիքների գնահատում պետական կառավարման և համայնքային ծառայության մակարդակով և սահմանում է ռազմավարական առաջնահերթության ոլորտները և թիրախային խմբերը՝ հետևյալ ձևով.

1. ՏԿԶՆ օգտվում է հիմնական ռազմավարությունների (օրինակ՝ Ազգային ռազմավարական զարգացման ծրագիր կամ Տարածքային զարգացման ռազմավարություն և դրանց իրականացման ծրագրեր), ինչպես նաև Կառավարության գործունեության ծրագրից և առանձնացնում հիմնական ուղղությունները, որոնցում ծրագրվող նոր քաղաքականությունների, օրենսդրության և ընթացակարգերի իրականացումը հնարավոր է, որ ազդի համայնքների աշխատանքի վրա և պահանջի համայնքապետարանների անձնակազմի կողմից նոր ունակությունների ձեռքբերում:¹

2. ՏԶԿՆ-ը հարցազրույցներ է անցկացնում համայնքապետարանների աշխատանքի վրա նշանակալի ազդեցություն ունեցող՝ վերհանված քաղաքականությունների, օրենսդրության կամ ընթացակարգերի նախագծման համար պատասխանատու պետական մարմինների համապատասխան պաշտոնատար անձանց հետ և սահմանում.

(ա) Արդյո՞ք համայնքային ծառայողներին անհրաժեշտ է ստանալ ցուցումներ, պարզաբանումներ և կամ այլ գիտելիքներ ու հմտություններ որոշակի (նոր) քաղաքականության/օրենսդրության/ընթացակարգի իրականացման համար:

¹ Եթե խորհրդատվական մարմինը ստեղծվի խորհրդատուների առաջարկած տարբերակով, այդ դեպքում խորհրդատվական մարմինը պետք է ակտիվորեն մասնակցի վերապատրաստման ռազմավարական կարիքների սահմանմանը:

(բ) Ովքե՞ր պետք է լինեն թիրախային խմբում. Համայնքային ծառայողների ո՞ր խմբերին է անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ ձեռք բերել՝ որոշակի քաղաքականության/օրենսդրության/ընթացակարգի իրականացմանն ուղղված վերապատրաստման թիրախային ունկնդիրը լինեն:

(գ) Ո՞ր հիմնական ունակություններին պետք է անդրադարձ կատարվի վերապատրաստման միջոցով (ի՞նչ գիտելիքներ ու հմտություններ պետք է թիրախային համայնքային ծառայողները ձեռք բերեն):

Վերապատրաստման կարիքների հարցազրույցի ուղղորդող հարցերը ներկայացվում են կից՝ Հավելված 1-ում:

3. ՏԿԶՆ-ը վերլուծում է հավաքած տեղեկությունները և գնահատում վերապատրաստման պահանջարկը (որոշում է վերահանված ռազմավարական ոլորտներում վերապատրաստում պահանջող համայնքային ծառայողների թիվը և գնահատում է պահանջվող վերապատրաստման տևողությունը):

4. ՏԿԶՆ-ը հավաքում և ամփոփում է համայնքապետարանների վերհանած վերապատրաստման կարիքների վերաբերյալ տեղեկությունները և գնահատում է վերապատրաստման պահանջարկը (համայնքային ծառայողների թիվը, ում համար համայնքապետարանների կողմից որպես առաջնահերթություն նշած ոլորտներում պահանջվում է վերապատրաստում):

5. ՏԿԶՆ-ը որոշում է վերապատրաստման առաջնահերթությունները, որոնք ներառվելու են հաջորդ տարվա վերապատրաստման ծրագրում (վերապատրաստման կենտրոնացված բաղադրիչ)՝ համայնքների հետ համագործակցությամբ² և գնահատում է առաջնահերթ վերապատրաստումների ֆինանսավորման կարիքները:

6. ՏԿԶՆ-ը մշակում է կենտրոնացված վերապատրաստումների տարեկան վերապատրաստման պլան, այդ թվում՝ սահմանելով վերապատրաստման միջոցառումների տեսակները (ծրագրեր, սեմինարներ, աշխատաժողովներ և վերապատրաստման այլ միջոցառումներ), ուսուցման նպատակները և բովանդակությունը վերապատրաստման յուրաքանչյուր միջոցառման համար, ինչպես նաև մի շարք վերապատրաստման միջոցառումներ, որոնք պետք է իրականացվեն վերապատրաստման առաջնահերթ բոլոր կարիքներին արձագանքելու նպատակով:

7. Համայնքապետարանները մշակում են իրենց աշխատակազմի վերապատրաստման պլանները՝ սահմանելով, թե կենտրոնացված կարգով կազմակերպված ո՞ր դասընթացներին է պետք մասնակցել, ինչպես նաև, թե մյուս ո՞ր աղբյուրները կարելի է օգտագործել համայնքապետարանի կարիքների գնահատման գործընթացում սահմանված՝ վերապատրաստման բոլոր առաջնահերթ կարիքներին արձագանքելու համար:

Համայնքապետարանների մակարդակով
վերապատրաստման կարիքների գնահատման
գործընթացի կազմակերպումը և կառավարումը

²Առաջնահերթության սահմանման վերաբերյալ խորհրդատվությունը կլինի խորհրդատվական մարմնի ամենակարևոր դերերից մեկը:

Համայնքապետարաններն իրենց աշխատակազմում իրականացնում են վերապատրաստման կարիքների գնահատում, հավաքում, վերլուծում և ամփոփում են տեղեկությունները, վերապատրաստման վերհանված առաջնահերթ կարիքների ամփոփագիրը ներկայացնում են ՏԿԶՆ-ին, ինչպես նաև մշակում են համայնքային աշխատակազմի վերապատրաստման միջոցառումների պլան (ռազմավարական առաջնահերթ ոլորտներում կենտրոնական վերապատրաստումների համար ՏԶԿՆ կողմից մշակված վերապատրաստման պլանին համահունչ):

Վերապատրաստման կարիքների գնահատման գործընթացում ներգրավված համայնքապետարանների պարտականությունները

Համայնքային ծառայողները և աշխատողները.

- Իրականացնում են ինքնագնահատում և/կամ ձևակերպում են իրենց վերապատրաստման և զարգացման անձնական կարիքները և սպասումները: Ինքնագնահատման հարցաշարը ներկայացվում է կից Հավելված 2-ում:
- Ապահովում են, որ վերապատրաստման ժամանակ իրենց ձեռքբերած գիտելիքներն ու հմտությունները կիրառվեն աշխատանքի վայրում և կարծիք ներկայացնեն իրենց հաճախած վերապատրաստման արդյունավետության վերաբերյալ:

Անմիջական վերադասները.

- Քննարկում են կատարողականի բացերը և վերապատրաստման հարակից կարիքները վերահսկվող աշխատակազմի հետ և լրացնում ու ներկայացնում են վերապատրաստման կարիքների գնահատման ձևը (հարցաշարը) աշխատակազմի ղեկավարին (կամ անձնակազմի կառավարման ստորաբաժանմանը/մասնագետին, եթե կիրառելի է): Գնահատման գործընթացում վերահսկվող աշխատողի կողմից կատարված ինքնագնահատումը քննարկվում է (ինքնագնահատման ձևաթերթի օգտագործմամբ), որպեսզի վերադասը կարողանա հաշվի առնել աշխատակցի կարծիքները և ձգտումները՝ իր գնահատումը ձևակերպելու ժամանակ: Վերահսկվող աշխատակազմի վերապատրաստման կարիքների գնահատման հարցաշարը ներկայացվում է կից Հավելված 3-ում:
- Գնահատում են վերապատրաստման արդյունքները՝ վերլուծելով, թե վերահսկվող համայնքային ծառայողներն ինչպես են ձեռքբերած գիտելիքներն ու հմտությունները կիրառում աշխատանքի վայրում: Առաջարկություններ են անում համայնքային ծառայության վերապատրաստման գործընթացի և վերապատրաստման ծրագրերի բարելավման վերաբերյալ (կիրառելով վերապատրաստման կարիքների գնահատման ձևաթերթերը):

Աշխատակազմի քարտուղարը (կամ անձնակազմի կառավարման վարչությունը կամ անձնակազմի կառավարման մասնագետը)

- Մահմանում է պլան ու վերջնաժամկետ վերապատրաստման կարիքների գնահատման տարեկան գործընթացի համար.
- Ցուցումներ է տալիս և ուղղորդում է համապատասխան աշխատակազմին՝ վերապատրաստման կարիքների գնահատման ողջ գործընթացի ընթացքում և նրանց տրամադրում է գնահատման ձևաթերթեր (հարցաշարեր).

- Վերադասներից հավաքում է վերապատրաստման կարիքների գնահատման ձևաթերթերը, վերլուծում և մշակում է համայնքապետարանի համար համախմբված հաշվետվությունը.
- Մոնիտորինգ է իրականացնում և գնահատում է վերապատրաստման արդյունքները և անում է բարելավման առաջարկություններ:

Բարձրագույն ղեկավարությունը/համայնքի ղեկավարը և համայնքի ղեկավարի տեղակալը (և աշխատակազմի քարտուղարը՝ անձնակազմի կառավարման ստորաբաժանումներ/մասնագետներ ունեցող համայնքներում):

- Համայնքային որոշ աշխատակիցների վերադասի դերում՝ քննարկում է կատարողականի բացերը և վերապատրաստման հարակից կարիքները վերահսկվող անձնակազմի հետ և լրացնում ու ներկայացնում է վերապատրաստման կարիքների գնահատման ձևաթերթը (հարցաշար) աշխատակազմի քարտուղարին (կամ անձնակազմի կառավարման ստորաբաժանումներ/մասնագետին, եթե կիրառելի).
- Ղեկավարի դերում՝ վերապատրաստման կարիքների գնահատման գործընթացը մոնիտորինգի է ենթարկում, ինչպես նաև գնահատում է վերապատրաստման և զարգացման գործընթացի արդյունքները:

Համայնքապետարանի վերապատրաստման կարիքների գնահատման հաշվետվության կառուցվածքն ու բովանդակությունը

Համայնքապետարանի վերապատրաստման կարիքների գնահատման հաշվետվությունը կազմվում է վերապատրաստման կարիքների գնահատման ձևաթերթերի հիման վրա, որոնք լրացվում են վերադասների կողմից: Հաշվետվության մեջ պետք է ներկայացվեն հետևյալի վերաբերյալ ամփոփ տեղեկություններ.

- Վերադասների կողմից նախորդ վերապատրաստման արդյունքների գնահատման մասին համառոտ ակնարկ.
- Համայնքապետարանում միտումների և նախատեսվող նոր նախաձեռնությունների համառոտ նկարագրություն, որոնց ուղղությամբ անհրաժեշտ է թարմացնել աշխատակազմի հմտությունները և գիտելիքները.
- Վերադասների կողմից վերհանված կատարողականի բացերի համառոտ ամփոփում, որոնց անհրաժեշտ է վերապատրաստմամբ թիրախավորել:
- Հարցաշարերից վերապատրաստման առաջնահերթ ոլորտները սահմանող տվյալների ամփոփում:

Վերապատրաստման առաջնահերթ ոլորտներ	Բացատրություն, թե ինչու է վերապատրաստման տվյալ ոլորտն առաջնահերթ	Վերապատրաստման մեջ ներառվելիքիմ նական թեմաների վերաբերյալ առաջարկություններ	Թիրախային խումբ (խմբեր) (որ պաշտոնները և քանի աշխատակից այս ոլորտում գիտելիքների ու հմտությունների կատարելագործ-
(Ըստ կարևորության դասավորված. առաջինը նշելով առավել կարևորը /առավել հաճախ	(խնդիրները, որոնց այս ոլորտում նախատեսվող վերապատրաստումն		

պահանջվողը)	անդրադառնալու է՝ կապված համայնքապետարանի գործառնությունների հետ)		ման կարիք ունի)

- Վերադասների կողմից համայնքային վերապատրաստման համակարգի բարելավման վերաբերյալ արված առաջարկությունների և մեկնաբանությունների ամփոփում (նախընտրված վերապատրաստողներ, վերապատրաստման տևողություն, ձևաչափ և այլն):

Վերապատրաստման կարիքների համապարփակ գնահատում

Քանի որ համայնքային վերապատրաստման համակարգն իր զարգացման առաջին փուլում է գտնվում և համայնքների մեծ մասն ունի ՄՌԿ խիստ սահմանափակ կարողություններ, խորհրդատուներն առաջարկում են յուրաքանչյուր տարի կիրառել վերապատրաստման առաջնահերթ կարիքների վերհանման համեմատաբար պարզ մոտեցում: Սակայն որոշակի ժամանակամիջոցից հետո (4-5 տարի կամ համայնքապետարանների ունակությունների նշանակալի փոփոխություններից հետո) խորհրդատուները կառաջարկեին իրականացնել վերապատրաստման կարիքների ավելի համապարփակ գնահատում: Դրա համար, մշակվել է ավելի համակողմանի հարցաշար, որը փորձարկվել և փոփոխվել է խորհրդատուների կողմից վերապատրաստման կարիքների փորձնական գնահատման ժամանակ: Հարցաշարի վերանայված տարբերակը կցվում է Հավելված 5-ում: Հաջորդ պարբերություններում ներկայացվում էնշված համապարփակ հարցաշարի միջոցով հավաքված տեղեկությունների վերլուծության և օգտագործման ձևի օրինակ:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ընդհանուր տեղեկություններ

Վերապատրաստման կարիքների գնահատման կազմակերպումը պիլոտային երկու համայնքներում

Վերապատրաստման կարիքների գնահատումն իրականացվել է երկու խոշորացված համայնքներում՝ Դիլիջանում և Տեղում: Վերապատրաստման կարիքների գնահատման համար կիրառվել են երկու տարբեր հարցաշարեր: Հարցաշարերից մեկն օգտագործվել է երկու համայնքների բոլոր համայնքային ծառայողների ինքնագնահատման համար. երկրորդ հարցաշարն օգտագործվել է համայնքների ղեկավարության հարցազրույցների համար (այդ թվում՝ համայնքների ղեկավարների և համայնքների ղեկավարների տեղակալների): Քանակական տվյալները հավաքվել են ինքնագնահատման հարցաշարերի միջոցով

(Հավելված 4), իսկ որակական տվյալները՝ համայնքապետարանների ղեկավարության հետ անցկացված հարցազրույցների միջոցով (Հավելված 5):

Համայնքների ընտրությունն առաջնորդվել էՏարածքային կառավարման և զարգացման նախարարության և «Տեղական ինքնակառավարման ծրագրի» Հայաստանի թիմի կողմից: Համայնքների ընտրության ժամանակ հաշվի են առնվել հետևյալ սկզբունքները.

- Համայնքները պետք է պարտադիր լինեն խոշորացված.
- Ներառեն քաղաքային և գյուղական համայնքներ.
- Ներառեն զարգացման և պակաս զարգացած համայնքներ:

Վերապատրաստման կարիքների գնահատումն իրականացվեց ծրագրի խորհրդատուների կողմից տարածքային կառավարման և զարգացման նախարարության ներկայացուցչի ուղեկցությամբ: ՎԿԳ ժամանակ իրականացվեցին հետևյալ աշխատանքները.


- Համայնքային ծառայողներին բացատրվեց ինքնագնահատման հարցաշարերի լրացման կարգը.
- Ուղղություն ցույց տրվեց ինքնագնահատման հարցաշարերի լրացման ժամանակ.
- Ստուգվեցին լրացված հարցաշարերը.
- Կառուցեց տվյալների բազա.
- Տվյալներիբազան լրացվեց, տվյալների բազան ստուգվեց.
- Տվյալները վերլուծվեցին և մշակվեց ՎԿԳ հաշվետվությունը:

Ինքնագնահատմամբ հարցվածների թիվը 42 է, իսկ ղեկավարների հետ անցկացված հարցազրույցներինը՝ 8: Ակնհայտ է, որ հարցվածների թիվը բավականաչափ մեծ չէ ամբողջական և շատ խորը ընդհանրացումներ և եզրակացություններ անելու համար, ուստի վերլուծությունը ընդհանուր է և ներկայացվում են ընդհանրական եզրակացություններ և առաջարկություններ: Այն համապատասխանում է տեխնիկական առաջադրանքին, քանի որ կոնկրետ այս ՎԿԳ-ն ավելի շատ ուղղված էր մեթոդաբանության և մոտեցումների փորձարկմանը: Պիլոտային փորձարկումն ապացուցեց, որ մեթոդաբանությունը ճիշտ է կարելի է ապագայում օգտագործել որպես համայնքային ծառայողների վերապատրաստման կարիքների գնահատման հիմնական գործիք: Ավելին, ծրագրի խորհրդատուները փոփոխեցին մեթոդաբանությունը և առաջարկեցին ՎԿԳ ավելի պարզեցված մոտեցում՝ համայնքային մակարդակով իրականացվելու համար, հաշվի առնելով մարդկային ռեսուրսների կառավարման ոչ բավարար կարողությունների փաստը:


Ընդհանուր տվյալների ամփոփում

Ինչպես նշվել է վերևի բաժնում, հարցվածների ընդհանուր թիվը 50 էր՝ 42-ը լրացրեցին ինքնագնահատման հարցաշարերը և 8 –ի հետ հարցազրույց անցկացվեց: Դիլիջանի համայնքապետարանում ինքնագնահատման հարցաշարերը լրացրեցին 32 հարցվածներ և Տեղի համայնքապետարանում՝ 10 հարցվածներ: Դիլիջանի համայնքապետարանում հարցազրույց անցկացվեց 5 ղեկավարի հետ և Տեղի համայնքապետարանում՝ 3: Համայնքային բոլոր ծառայողները և բնակավայրերի ներկայացուցիչները երկու համայնքներում էլ լրացրեցին ինքնագնահատման հարցաշարերը, երկու համայնքապետարաններում էլ անցկացվեցին համայնքի ղեկավարի, համայնքի ղեկավարի տեղակալի, աշխատակազմի քատուղարներին կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների հարցազրույցներ:

Հարցվածների 40,5 տոկոսը կանայք էին, 59,5 տոկոսը՝ տղամարդիկ: Ստորև գծապատկերում ցույց է տրվում (ինքնագնահատման հարցաշարերի) բոլոր հարցվածների կրթական մակարդակը: Ըստ արդյունքների՝ երկու համայնքապետարաններում բոլոր համայնքային ծառայողներն ունեն միջին մասնագիտական կամ բարձրագույն կրթություն: Չկան նախնական կրթությամբ կամ գիտությունների թեկնածուի գիտական աստիճան ունեցող ծառայողներ: Ուստի, կցանկանայինք շեշտել, որ համայնքային ծառայողների կրթական մակարդակը բավականաչափ բարձր է ընդ որում երկու պիլոտային համայնքներում բարձրագույն կրթությամբ համայնքային ծառայողների ընդհանուր ցուցանիշը գրեթե 84 տոկոս է կազմում:



Համայնքային ծառայողների գործառնությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշ գործառնություններ հիմնականում ընդհանուր են, իսկ մի շարք այլ գործառնություններ համայնքային ծառայողների ոչ: 2-րդ գծապատկերը ցույց է տալիս գերակշռող հիմնական գործառնությունները:



Ինչպես երևում է 2-րդ գծապատկերից, հիմնական գործառնությունները կապված են հարկերի հավաքագրման, ինչպես նաև ծառայությունների մատուցման հետ, ինչն ընդհանուր առմամբ համահունչ է համայնքապետարանների գործառնություններին: Նշված գործառնությունները բնութագրված են փոքրաթիվ են այն գործառնությունները, որոնք կապված են զարգացման ծրագրերի մշակման, բյուջետավարման, ծրագրերի կառավարման և այլնի հետ (այդ գործառնություններից յուրաքանչյուրն ունի նշված բոլոր գործառնություններից շուրջ 1,3 տոկոսը): Այսպիսի իրավիճակներում կարելի է եզրակացնել, որ համայնքապետարաններն իրենց ջանքերը կենտրոնացնում են առօրյա խնդիրների իրականացման վրա և չեն դիտարկում համայնքի զարգացումը որպես գործունեության առաջնահերթություն:

Հարցվածներն իրենց կարծիքն են ներկայացրել երկու շատ կարևոր հարցերի վերաբերյալ. 1) Նշեք Ձեր կառուցվածքային ստորաբաժանման երեք հիմնական գործառնությունները, որոնք կարող են բարելավվել վերապատրաստման միջոցով և 2) Նշեք այն երեք հիմնական առաջնահերթությունները, որոնք կառաջարկեք իբրև վերապատրաստման թեմա³: Նշված երկու հիմնական գործառնությունները, որոնք կարող են վերապատրաստումների միջոցով բարելավվել, հետևյալն էին՝ 1) համակարգչային հմտությունները (բոլոր պատասխանների 6,1 տոկոսը) և 2) խնամակալությունը (բոլոր պատասխանների 6,1 տոկոսը): Մնացած պատասխանները բաշխվել էին հավասարապես և առավել հետաքրքիր գործառնությունները, որոնք կարելի է բարելավել, հետևյալն էին.

- Հաշվապահական հաշվառման վերապատրաստում
- Եկամուտների հավաքագրում, տեղական հարկեր
- Տարածական պլանավորում, գույքի կառավարում
- Գյուղատնտեսություն, անասնաբուծություն, սննդի վերամշակում, այգեգործություն
- Գնումների կազմակերպում
- Զբոսաշրջություն
- Տարհանման համար մոբիլիզացման պլան
- Նոր ծրագրերի համար վերապատրաստումներ
- Իրավական ակտերի իմացություն
- Բյուջե և ֆինանսներ
- Վարչարարություն և կառավարում
- Տեղական ծրագրերի մշակում
- Տնտեսություն և համայնքային զարգացում
- Բնակարանային նորմեր
- Քաղաքաշինական փաստաթղթերի կազմում


Երեք հիմնական առաջնահերթ վերապատրաստումների պատկերը զգալիորեն տարբերվում է այն գործառնություններից, որոնք հակորոշվել են որպես զարգացման ներուժ ունեցող գործառնություններ (տե՛ս 3-րդ գծապատկերը): Երեք ոլորտները, որոնք

³Պատասխանողների փոքր թվով պայմանավորված՝ այդ հարցերի պատասխանները չէին կարող համարվել չափազանց տեղեկատու և հուսալի:

բավականաչափ հստակ են և բացատրության կարիք չեն զգում՝ *գնումները, հաշվապահական հաշվառումը և զբոսաշրջության զարգացումն են*: Մյուս երկու թեմաները պարզաբանման կարիք ունեն: Ծրագրի փորձագետները ենթադրում են, որ

«Աշխատանքի բարելավման համար նոր հմտություններ կորոշակի մասնագիտություններին հատուկ վերապատրաստումներ» վերապատրաստման թեմաները կապված են կատարողականի բարելավման համար հարողակացության և շփման հմտություններին ձեռք բերման հետ: Մյուս ենթադրությունն այն է,

որ համայնքային ծառայողները լիարժեքորեն չեն պատկերացում մի քանի վերապատրաստման կարիքները, և իրենց կարծիքները ձևակերպում են ընդհանուր պնդումներին ձևով, սակայն այս իրավիճակը տարեցտարի կբարելավվի:



4-րդ գծապատկերը ցույց է տալիս վերապատրաստման համար առաջնահերթ հիմնական թեմաները,

որոնց փոփոխման պետք է տարանջատել որոնք կարող են բարելավվել:

Կան վերապատրաստման մի քանի թեմաներ, որոնք կարելի է միավորել,

օրինակ՝ ՏՀՏ հարցեր, իրավական հարցեր,

քաղաքաշինություն և հողաշինարարություն: Նկատենք նաև, որ երբ հարցվածները

պատասխանում են համայնքապետարանի այն ոլորտներին, որոնք հարցին, որոնք

կարող են բարելավվել վերապատրաստումներին միջոցով,

նրանց պատկերացումները բավականին անորոշ են, ավելի կոնկրետ է:


Կան որոշ ոլորտներ և վերապատրաստման թեմաներ, որոնք համընկնում են՝ 1)

գնումներ և 2) *զբոսաշրջություն*: Համապատասխանաբար,

վերապատրաստման առաջիկա շրջափուլերում

նշված երկու թեմաներն անհրաժեշտ է լրջորեն ընդհանրացնել որպես վերապատրաստման թեմաներ:


Գրապատկեր 4. Համայնքապետարանների համար առաջնային վերապատրաստումներ %



Տեղեկություններանցած վերապատրաստմանարդյունքներիվերաբերյալ

Վերապատրաստման կարիքների գնահատումների ժամանակ շատ կարևոր է նախկին վերապատրաստումների որակի վերաբերյալ տեղեկությունների հավաքումը, ինչպես նաև հարցվածների կարծիքի ըմբռնումը՝ կապված լավ որակի վերապատրաստումներ ստանալու խոչընդոտների հետ: 5-րդ գծանկարում ամփոփ տեղեկություններ են ներկայացվում համայնքային մակարդակով բարձրորակ վերապատրաստումներ ստանալու հետ կապված հիմնական խոչընդոտների վերաբերյալ: Հարցվածների 24 տոկոսը պատասխանել է, որ հիմնական խոչընդոտներից մեկը համայնքային ծառայողներին առաջարկվող որակյալ վերապատրաստումների պակասն է, գրեթե 21 տոկոսը պատասխանել է, որ հիմնական խոչընդոտը լավ վերապատրաստում իրականացնողների բացակայությունն է (ենթադրվում է վերապատրաստում իրականացնող կազմակերպությունների և վերապատրաստողների): Երրորդ հիմնական խոչընդոտը իրականացվող գործառույթներին վերապատրաստման գործնական անհամապատասխանությունն է, որին բաժին է ընկնում ընդհանուր պատասխանների 16,4 տոկոսը: Բացահայտված երեք հիմնական խոչընդոտներն ապացուցում են, որ Հայաստանի համայնքային ծառայողների համար թիրախավորված, գործնական վերապատրաստումների մատչելիության խնդիր կա: Խնդիրն անհրաժեշտ է լրջորեն հաշվի առնել՝ Հայաստանի համայնքային վերապատրաստման համակարգը բարեփոխելու ընթացքում:


Գծապատկեր 5. Համայնքապետարանների որակյալ վերապատրաստումների հիմնական խոչընդոտներ %



Պիլոտային համայնքապետարաններում հարցվածների շրջանում 2017 թ.ին վերապատրաստումներին մասնակցության ցուցանիշը բավականաչափ ցածր էր՝ վերապատրաստումներին մասնակցել էր բոլոր հարցվածների ընդամենը 12 տոկոսը, իսկ հարցվածների 88 տոկոսը 2017 թ. որևէ վերապատրաստման չէր մասնակցել: Միննույն ժամանակ պետք է նշել, որ ՎԿԳ իրականացվել է մայիսին և ենթադրվում է, որ որոշ համայնքային ծառայողներ 2017 թ. ընթացքում կմասնակցեն վերապատրաստումների:

6-րդ գծապատկերում ցույց է տրվում, թե հարցվածներն ինչպես են գնահատում նախկին վերապատրաստումների որակը և հատկապես՝ նրանց կատարողականի վրա վերապատրաստումների ազդեցությունը: 39 տոկոսը պատասխանել է, որ վերապատրաստումներն ապահովել են հմտություններ և գիտելիքներ և նշանակալիորեն բարելավել են կատարողականը/արդյունավետությունը: 32 տոկոսը պատասխանել է, որ վերապատրաստումները չափավոր ազդեցություն են ունեցել կատարողականի վրա: Մնացած հարցվողները (շուրջ 28 տոկոս) պնդել են, որ վերապատրաստումները շատ քիչ կամ անգամ որևէ ազդեցություն չեն ունեցել կատարողականի վրա:

Գծապատկեր 6. Նախկին վերապատրաստումների ազդեցությունը արդյունավետության վրա




- Վերապատրաստումները տվեցին աշխատանքս կատարելու համար գիտելիք և հմտություն/շատ արդյունավետ
- Վերապատրաստումները մասամբ էին վերաբերվում աշխատանքիս/միջին արդյունավետություն
- Վերապատրաստումները քիչ էին վերաբերվում իմ աշխատանքին և շատ քիչ օգնեցին
- Վերապատրաստումները չեն տրամադրել գիտելիք և հմտություն, արդյունավետությունը չի բարձրացել

5-րդ և 6-րդ գծապատկերներում ներկայացված արդյունքները հակասական են. մերկողմից հարցվածները նշել են, որ բարձրորակ վերապատրաստումների և լավ վերապատրաստում իրականացնողների խնդիր կա և միևնույն ժամանակ նրանք նշել են, որ բազմաթիվ են այն վերապատրաստումները, որոնք բավականին նշանակալի ազդեցություն են ունեցել իրենց կատարողականի վրա: Այս իրավիճակում կարելի է անել որոշ եզրակացություններ.

- 1) Մեր կողմից հարցվածների հմտություններն ու գիտելիքները բավականին ցածր մակարդակի վրա էին, և այդ վերապատրաստումներն ապահովել են մեծ ազդեցություն.
- 2) Հարցվածները չեն ցանկացել բացասական կարծիք ներկայացնել նախկին վերապատրաստումների վերաբերյալ.
- 3) Հարցվածները լիարժեք չեն հասկացել ՎԿԳ կարևորությունը և պարզապես պատասխանել են:

Շատ հետաքրքիր է նաև հարցվածների կարծիքների վերլուծությունը համայնքային ծառայողների վերապատրաստումների պարբերականության վերաբերյալ (տե՛ս 7-րդ գծապատկերը): Գրեթե 32,5 տոկոսը պատասխանել է, որ նախընտրելի է տարեկան կտրվածքով վերապատրաստում անցնելը, ինչը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ մարդիկ փոփոխություններ չեն սիրում և ինչ-որ կերպ դիմադրում են փոփոխություններին: Միևնույն ժամանակ հարցվածների 16,2 տոկոսի պատասխանները ցույց են տալիս, որ նրանք նախընտրում են վերապատրաստում անցնել կիսամյակային կտրվածքով, մինչդեռ 16,2 տոկոսի պատասխաններում նշվում է, որ վերապատրաստումների առավել նախընտրելի ժամկետը ցպահանջն է: Հարցվածների 13,5%-ը նշում է, որ վերապատրաստումների առավել իրագործելի ժամկետը եռամյակային պարբերականությունն է: Պատասխանների 21,6%-ով նշվում է, որ չգիտեն, թե վերապատրաստումների որպարբերականությունն է ընտրության լավագույն տարբերակը: Ծրագրի խորհրդատուները ենթադրում են, որ այս պատկերը մի քանի պատճառ ունի.

- Համայնքային ծառայողները փոփոխություններ չեն ցանկանում, ուստի նրանց դիրքորոշումը վերապատրաստման համակարգը չփոխելն է և տարեկան կտրվածքով վերապատրաստումներ ստանալն է.
- Ջգալի մեծ թվով համայնքային ծառայողներ լիարժեք չեն պատկերացնում վերապատրաստման համակարգը և նրանց դիրքորոշումն անորոշ պատասխաններ տալն է.
- Համայնքային ծառայողների մյուս մեծ հատվածն ընդունում է վերապատրաստման համակարգի բարեփոխման անհրաժեշտությունը և նրանք տեսնում են, որ վերապատրաստումները պետք է լինեն ավելի հաճախակի կամ ցպահանջ:




Արդյունավետ աշխատանքի համար հմտությունների և գիտելիքների ոլորտների կարևորության վերլուծություն՝ ըստ բոլոր հարցվածների պատասխանների

Վերապատրաստման կարիքների վերհանման համար տեղեկատվության հիմնական աղբյուրներից մեկը համայնքապետարանի գործառույթների կարևորության վերաբերյալ հարցվածների ընկալումն է, ինչպես նաև նրանց գիտելիքների կամ հմտությունների մակարդակը հարցաշարով նախապես սահմանված ոլորտներում: 9-րդ գծապատկերը ցույց է տալիս, թե հարցվածներն ինչպես են ընկալում հարցաշարով նախապես սահմանված ոլորտների կամ թեմատիկ ուղղությունների կարևորությունն իրենց աշխատանքում: Այս գծապատկերում հաշվի են առնվել միայն «առաջնահերթություն» պատասխանները: Տրամաբանական է պատասխանների խմբավորումը երեք՝ բարձր, միջին և ցածր ցուցանիշներով խմբերում: Պատասխանների ամենաբարձր ցուցանիշը ձևավորվել է երկու թեմատիկ ոլորտներում՝ բյուջե, ֆինանսներ և գնումներ (16,6%) և ընդհանուր վարչարարություն (15,9%): Սա բավականին տրամաբանական է, քանի որ ծրագրային բյուջետավարման նոր համակարգը գտնվում է ներդրման փուլում և համայնքային ծառայողներն ընդունել են, որ այն իրենց աշխատանքի համար առաջնահերթություն է: Ընդհանուր վարչարարությունը համայնքային ծառայության ամենաթույլ կետերից է, և սա ևս կանխատեսելի արդյունք է: Միջին գնահատված թեմատիկ ոլորտները ներառում են տնտեսությունը և համայնքային զարգացումը (10,5%),

տեղեկատվական տեխնոլոգիաները և համայնքային էլեկտրոնային ծառայությունները (10,1%) և կառավարումը (7,8%): Այդ պատասխանների բաշխվածությունը նույնպես տրամաբանական է և համահունչ է տեղական ինքնակառավարման զարգացման ընդհանուր ռազմավարական շրջանակին. ա) բարեփոխումների շրջանակում նախատեսվում է պլանավորման նոր համակարգ, որը համայնքային զարգացման մաս է կազմում, բ) ՏՏ տեխնոլոգիաները բավականաչափ արագ են ներթափանցում համայնքային ծառայություն, գ) ռեսուրսների և մարդկային ռեսուրսների կառավարումը համայնքային ծառայությունում ևս ավելի է կարևորվում:

Գծապատկեր 8. Կարևորությունը արդյունավետ աշխատանքի համար (բոլոր թեմատիկ ոլորտներից) (միայն "Առաջնային է" պատասխանը)



- 18 Տարածական պլանավորում, գեոդեզիա, կադաստր և գույքի կառավարում
- 19 Կոմունալ ծառայություններ և բնակարանային տնտեսություն, տրանսպորտ
- 20 Բնապահպանություն և քաղաքացիական պաշտպանություն
- 21 Սոցիալական պաշտպանություն, սոցիալական ապահովում, առողջապահություն և քաղաքացիական կացության ակտերի գրանցում
- 22 Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդություն
- 23 Գյուղատնտեսություն
- 24 Բյուջե, ֆինանսներ և գնումներ
- 25 Տնտեսություն և համայնքային զարգացում
- 26 Ընդհանուր վարչարարություն
- 27 Տեղական ժողովրդավարություն
- 28 Էթիկա և հակակոռուպցիոն միջոցառումներ
- 29 Տեղեկատվական տեխնոլոգիաներ և համայնքային էլեկտրոնային ծառայություններ
- 30 Միջազգային համագործակցություն
- 31 Կառավարում
- 32 Կադրերի կառավարում

Աղյուսակ 1. Հարցաշարերի արդյունքները տարբեր հմտությունների և գիտելիքների կարևորությունը աշխատանքում Բյուջեի, ֆինանսների և գնումների թեմատիկ ոլորտում «Առաջնահերթություն» պատասխանի ամենաբարձր ցուցանիշով պատասխանները(%)

Բյուջե, ֆինանսներ և գնումներ	ԿՆ մեթոդ	Մասամբ կարևոր է	Կարևոր է	Մտախնայողություն է	Լրիվապես ոչ ուսումնական

24.1 Բյուջե և ֆինանսներ						
24.1.1	Բնագավառի իրավական և կանոնակարգող դաշտ	2,4	19,5	31,7	31,7	14,6
24.1.2	Համայնքի եկամուտների աղբյուրներ (իրավական դաշտ, հատկացումներ, եկամուտների տեսակներ, նպատակներ)	2,4	12,2	39,39	34,1	12,2
24.1.3	Տեղական հարկերի հավաքագրում և վարչարարություն	2,4	4,9	39,39	43,9	9,8
24.1.4	Ֆինանսավորման այլ գործիքներ	4,9	24,4	26,8	19,5	24,4
24.1.5	Ծրագրային բյուջեի մշակում, կատարում և հաշվետվություններ	9,8	17,1	29,3	29,3	14,6
24.1.6	Ներքին առդիտ	14,6	17,1	26,8	14,6	26,8
24.1.7	Ֆինանսական ռեսուրսների և ծախսերի կառավարում	9,8	17,1	36,6	24,4	12,2
24.1.8	Կապիտալ ներդրումների պլանավորում և կառավարում	9,8	24,4	31,7	17,1	17,1
24.1.9	Համայնքային ակտիվների կառավարում	9,8	22	34,1	14,6	19,5
24.1.10	Հաշվապահական հաշվառման ծրագրային ապահովում	17,1	7,3	36,6	24,4	14,6
24.2 Գնումներ						
24.2.1	Իրավական դաշտ և սկզբունքներ	14,6	19,5	24,4	22	19,5
24.2.2	Գնումների մեթոդներ, գնումների կազմակերպում, գնումների ընթացակարգեր, այդ թվում էլ-գնումներ	17,1	14,6	24,4	19,5	24,4

Հարցվածների պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ հարցաշարերում նշված թեմաների մեծ մասը զգալի թվով հարցվածների կողմից գնահատվել են որպես «կարևոր» և «առաջնահերթություն»: Մակայն բյուջետավարումը, ֆինանսները և ֆինանսների կառավարումը, ինչպես նաև գնումները համայնքապետարանների աշխատանքի արդյունավետ կազմակերպման համար գնահատվում են որպես առավել կարևոր թեմատիկ ոլորտներ: Ուստի, այդ թեմաները պետք է հաշվի առնվեն հետագա տարիներին համայնքային ծառայության վերապատրաստումը պլանավորելիս:

Մյուս առաջնահերթ թեմատիկ ոլորտն ընդհանուր վարչարարությունն է, որը «Առաջնահերթություն է» պատասխանների ցուցանիշով ամենաբարձրն է: 2-րդ աղյուսակը ցույց է տալիս ընդհանուր վարչարարություն թեմատիկ ոլորտի բոլոր թեմաների պատասխանների արդյունքները:

Աղյուսակ 2. Հարցաշարերի արդյունքները տարբեր հմտությունների և գիտելիքների կարևորությունը աշխատանքում՝ ընդհանուր վարչարարություն թեմատիկ ոլորտում «Առաջնահերթություն» պատասխանի ամենաբարձր ցուցանիշով պատասխանները (%)

Ընդհանուր վարչարարություն		Կարևոր չէ	Մասամբ կարևոր է	Կարևոր է	Չեմ կարող նշել	Խլորտում պատասխանել
26.1	Ընդհանուր իրավական դաշտ					
26.1	Սահմանադրական հիմունքներ	2.4	4.9	53.7	12.2	26.8
26.1	ՀՀ հանրային կառավարման համակարգ	2.4	9.8	61.0	7.3	19.5
26.1	Վարչական իրավունք և վարչական վեճեր	2.4	17.1	48.8	4.9	26.8
26.1	Զբաղվածության ոլորտում հարաբերություններ	7.3	12.2	51.2	0.0	29.3
26.2	Տեղական ինքնակառավարման իրավական դաշտ					
26.2	ՀՀ ՏԻԿԳՐՈՆՔՆԵՐ	2.4	7.3	53.7	17.1	19.5
26.3	Իրավական հարցեր					
26.3	Իրավաբանական բնույթի փաստաթղթերի կազմման տեխնիկա	2.4	9.8	48.8	14.6	24.4
26.3	Իրավական նդատական ներկայացուցչություն	14.6	17.1	34.1	12.2	22.0
26.4	Աշխատանքի ակտիվության հետ					
26.4	Հաճախորդամետ ծառայություններ և հաղորդակցություն հաճախորդների (քաղաքացիների) հետ	7.3	7.3	41.5	29.3	14.6
26.4	Սթրեսի, կոնֆլիկտների կառավարում	14.6	9.8	41.5	29.3	19.5
26.5	Գրասենյակի կառավարում					
26.5	Գրասենյակի կառավարման հետ կապված ընթացակարգերի կարգեր	7.3	9.8	46.3	12.2	24.4
26.5	Փաստաթղթաշրջանառության կառավարման էլ. համակարգեր	2.4	9.8	43.9	24.4	19.5
26.6	Ավագանու և հանձնաժողովների ինստրուկտիվ աշխատանք					
26.6	Ավագանու ինստրուկտիվ ընթացակարգերի նախապատրաստում	19.5	4.9	39.0	17.1	26.8
26.6	Ավագանու և հանձնաժողովների ինստրուկտիվ կազմակերպումն վարում	14.6	17.1	29.3	17.1	22.0
26.6	Ավագանու և հանձնաժողովների իրոշումների կատարում	14.6	12.2	36.6	17.1	19.5

26.6 .4	Ավագանու և հանձնաժողովների ընտրությունների կատարման մոնիթորինգի գնահատում	17 .1	9. 8	36 .6	14 .6	22 .0
26.7	Տեխնիկական և վարչական աշխատանք					
26.7 .1	Մեղմագրերի, նամակների, հաշվետվությունների, նշումների, հանդիպումների արձանագրությունների մշակում	7. 3	17 .1	36 .6	4. 9	34 .1
26.7 .2	Հեռախոսով հաղորդակցում	7. 3	14 .6	36 .6	4. 9	36 .6
26.7 .3	Աշխատանք հաճախորդների հետ	7. 3	7. 3	34 .1	19 .5	31 .7

Հարցաշարում նշված թեմաների առյուծի բաժինը գնահատվել է որպես «Կարևոր» և «Առաջնահերթություն»՝ պատասխանների մյուս տարբերակները նշելուց ցուցանիշը բավականաչափ ցածր է: Հարկ է նշել, որ Ընդհանուր կառավարման առաջնահերթության ոլորտում երկու համայնքապետարաններում էլ համայնքային ծառայողների աշխատանքում բոլոր թեմաները որպես կարևոր և առաջնահերթ են նշվել, ինչը ցույց է տալիս, որ հարցվածները հասկանում են, որ ընդհանուր կառավարումը շատ անհրաժեշտ է իրենց գործառույթների արդյունավետ իրականացման համար:

